600.0031.06.05.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2002 թվականի № 31
ք.Երևան

«Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության «Եղեգիս» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 2-րդ կետը և 59-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ՀՀ Վայոց Ձորի մարզի Հերմոն գյուղի վարչական տարածքում՝ Եղեգիս գետի վրա, կառուցված «Եղեգիս» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 17.943 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 14.952 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:
2. «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության «Եղեգիս» փոքր ՀԷԿ-ից առաքվող էլեկտրական էներգիայի 2002 թվականի քվոտան սահմանել 1,1642 մլն կՎտժ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունիսի 6-ից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ ***Ն. Գրիգորյան***